ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/8525/02/24 ք. Երևան
24 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանս, ծանոթանալով «ԷՆԵՐՋԻ ՖԱՔԹՐԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Էներջի Ֆաքթրի» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի՝ «Էներջի Ֆաքթրի» ՍՊ ընկերությանը «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» Երևանի քաղաքապետի 2024թվականի սեպտեմբերի 24-ի N 3646-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները

չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարան ՀՄ-ից պետք է պահանջել Երևանի քաղաքապետի 2024թվականի սեպտեմբերի 24-ի N 3646-Ա որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Էներջի Ֆաքթրի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի՝ «Էներջի Ֆաքթրի» ՍՊ ընկերությանը «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» Երևանի քաղաքապետի 2024թվականի սեպտեմբերի 24-ի N 3646-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.Երևանի քաղաքապետարան ՀՄ-ից պահանջել դատարան ներկայացնել Երևանի քաղաքապետի 2024թվականի սեպտեմբերի 24-ի N 3646-Ա որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի դեկտեմբերի 05-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.24 12:28:10 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am